Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, Յունվարի 24-ին. Թիֆլիս. №4.

ԳԻՇԱՏԻՉ ԱՆԳՂԵՐԸ.



...րը նա գլխակոր, բայց հանգիստ սրտով
...ր արտն է հերկում, հողը մշակում.
...որ հոգոց հանում, ծով դարդն է երգում՝
...ենց այդ ժամանակ եւ այդ իսկ պահուն

Արիւնարբուները դաւեր են լարում
Խիղճ անձնուրացին դաւաղիր տեսնում.
Ո՞հ այսպէս է միշտ կեանքի խնջոյքում,
Լիրբն ու կեղտոտը միշտ բարձր է խօսում.

Տեղ եղած ժամին եւ դաւ է լարում
Ու մարդասպան է, մարդիկ գողանում
Ու հայրենիքը մի ԳՐՕՇԻ ծախում.
Իսկ մեծ ժողովի՜ն, աջ կողմում բազմում։




ՆՊԱՍՏՆԵՐԻ ԲԱԽՇՈՒՄԸ ՍՈՎԵԱԼՆԵՐԻՆ



ՆՈՐ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԳԱՆՁՈՒՄԸ ԵՒ ՆՈՐ
ՍՈՎԵԱԼՆԵՐԻՑ—ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄ Է 4 Տարի

# „ԽԱԹԱԲԱԼԱ“

Երգիծաբանա-կան-ատիրական շաբաթաթերթ

4 Տարի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր գրւող բաժանորդները կամ բաժանորդագրութիւն նորոգողները թերթը ստանում են № 1-ից

| | |
|---|---|
| Տարեկան գինն է Թիֆլիզում 4 ր. | Դուրսը և Արտասահման 5 ր. |
| Կէս տարւանը » » » » 2 ր. 50 | Կէս տարւանը » » 3 ր. |

Խմբագրութիւնը բ ց է երբ փակ չէ, իսկ ԴՐԱՄԱՐԿՂԸ փակ է գիշերները.

Մեր հասցէն՝ Тифлисъ редакція „Хатабала“

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction „Khathabala“.

Խմբ. հրատարակող՝ ԱՒՏ. ԵՐԻՑԵԱՆ

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մեր նոր բաժանորդներից շատերը, թւով մի քանի հարիւր հոգի, կարդալով «Մշակ» և «Գործ» թերթերում մեր յայտարարութիւնը, ուղարկել են մեզ ամբողջ տարւայ բաժանորդագին չորսական րուբլի, փոխանակ հնգի։

Տպարանական այդ սխալի իսկոյն ուղղեցին յիշեալ թերթերը։

Ուստի խնդրում ենք մեր այն բաժանորդներից, որոնք չորսական րուբլի են ուղարկել, կամ լրացնել բաժանորդագինը ուղարկելով ևս մէկ րուբլի՝ դրամով կամ մարկայով, կամ իրենց կուղարկենք թերթը միմիայն մինչև առաջիկայ նոյեմբերի 1-ը։

## ՍԻՐԱՆՈՅՇԸ

Էսօր թամամ է լրում եառասունհինգ տարի էն օրէմէն, ինչ վուր մեր աղիզ Սիրանուշը՝ հառւց թըխտարի փարթն ու զարթը էլաւ։

Էսօր թամամ է լրում եառասունհինգ տարի էն օրէմէն, ինչ վուր մեր աղիզ Սիրանուշը՝ իր տան բանն ու գուրձը թողած, հառւց սակի խաթրու ցերեկները մթնեցնում ու գիշերներն էլ լուսցնում էր։

Էսօր թամամ է լրում եառասունհինգ տարի էն օրէմէն, ինչ վուր մեր աղիզ քուրացու Սիրանուշը՝ իր օջախը թողած, իր խիլքը, շնուրքը, ֆիքրն ու լաղաթը, հառւց սակի մինձ օջախի կրակին ու բոցին ուեց։



ՏԻԿ. ՍԻՐԱՆՈՅՇ

Արտիստական գործունէութեան XXXV ամեակի առթիւ

Էսօր թամամ է լրում եառասունհինգ տարին էն օրէմէն, ինչ վուր մեր սակի պէյծառութին ու աղիզ Սիրանուշը՝ մէ քիչ ախրակութին արից, սուսուցցաւ ու հառւց սակի սկաուրներու հիդ իր գլուխն ու բախտը կապից։

Էսօր թամամից եառասունհինգ տարի էն օրէմէն, ինչ վուր մեր Սիրանուշը... մեր երեսին էր տալի մեր պակասութիւններն ու յիմարութիւնները։

Էսօր թամամից եառասունհինգ տարի էն օրէմէն. ինչ վուր... հէյգիդի հա... էսենց վուր գրիմ, ով գիդի եառասունհինգ տարի չկարենամ նրա ապրածը պատմի։

Եառասունհինգ տարի ապրել, գուրձել, աշխատել, իրա սակութար քրտինքով գլուխը պահել, խալխի համա ջաֆա քաշել, խալխին տիղն ննգած ափը ծիծաղացնել, տիղն ննգած ափը լացացնել. սա կինք կի չէ, մեռնելէմէն էլ բեթար է։

Ու ջեր մեր սիրելի Սիրանուշը կի կինք ունէ։

Հալբաթ դրա ջիլքը էրկաթէմէնին էլի։

Տօ, էստի մարթիք գիդիմ, վուր վունց ցանում են, վունց հնձում, թաչաների հանգը ապրում են ու էլի չեն կանում եառասունհինգ տարի գլուխը պահի։

Սիրանուշը կի, եառասունհինգ տարի աշխատել է, իրա կնիկ ախղաւր ու էն էլ սրամէն եառասունհինգ տարի ազաթ՝ համբավի, պատւի, սղնութենի ու սիրունի սերմերը մեր ամգում, անուէր ու անտաշ սակում ցանելով։

Ասկեր էլ կան, ասկեր էլ։

Հիմի մենք էլ սակ ենք ու ենգլիզներն էլ։

Էնթի շաթթեն, էքապրոպրիատորը, էնզօնուքը, մէ էրկու հարիր թուման փախցրել են ու մէ զուժեն էլ մարթիք կոտորել. իժում էնդանց պօլիցէն խալխի հիդ միացել է, դրանցմէն փուղերը առել է յիդ ու էքսպրոպրատորին էլ իրենց իրենց մեռել ենա էստ համա են զիգերքը ... անի են կաղնի, քիչ է մնում էն էքսպրոպրիատորներու ու սրանց չաչիս-լօշկէրու փախէն հարի. մենք կի... մենք կի... են, մենք էլ սակ ենք. ամսով մեզ. էքսպրոպրիատորէմէն էնենց ենք վախում, վուր... հասիս թէ տանդ նրանց չենք կանայ ապրի։

Այ վունց վուր սակերի մէջ բան ու վաղը կայ, էնենց էլ ձիաներու, խուզերի, շներու մէջ. էնենց էլ մարթկերանց մէջը։

Մա՞յ։

Ցիրկումը մէ շուն կայ, վուր սառում են զարագովը գալիս է, էնչախնենէթ փախչում, թախ է կենում։

Մէ խուզ կայ, վուր ուփրօ շատ բան գիդի ու շատ էլ ամանչում է, քանց թէ մարթկերանցէմէն շատերը։

Ձիաներու համա էլ ենչ ասիմ.

Ձի կայ վուր... վուր սառւքան հազար թուման փող առէ։

Մարթա կի մէ գրւուշ էլ չաժէ։

Սպանում են, գողնում են, թալնում են, կոտրատում են ու... ուշով էստւ համա ձէն չէ հանում։

Մեր Սիրանուշը խանդիկան էնէնց է լաց լըցում թէատրումը, սուս-սուս հիւանդանում, իժում մեռնում, հէնց գիդիս դուրթ է րլում ու խալխն էլ տրատւում, զարզատւմէ ու Սիրանուշի հիդ մեռնում. Սիրանուշը մեզ բա...

րիս տխտում է ու էս եռասանահինգ-տարի մէ գլուխ։

Մենք կի, քանի թրիստրումեիք ու տեհնում ինք նրա խաղը, խշում ինք. իփ վուր տուն ինք գալի թրիստրէմէն, մտածում ինք էն մէկէլ տարուայ ձնի համդի։

Ամութ միզ։

Ամութ միզ ու հազար ամութ, վուր Սիրանուշին էլ տում ինք թէ՝ «Սիրանուշ ջան, մենք քիզ սիրում ինք, մենք քիզ պաշտում ինք, քու խաթրու համա գլխնիրս մահով կուտանք, էրեսնիրս պատռով. փուղ կու խարջինք» ու խի ինչ գիդիմ, հազար էս թուռուր բաներ ու էս էն չաինն ինք տում, իփ վուր իրեն տեհնում ինք խաղալիս, իժում... իժում կի մտածում ինք ու մտածում ինք էն էլ, վուր մեր ազիզ Սիրանուշր էս եռասանահինգ տարի է խան ցիրկումն է խաղում, խան կլուբումը, խան քարվանսարումը, խան գոմումը ու վունց մէ ջեր իրա սակութար ու լալիզ տիզ՝ հատոց ասկի բրիլյանտումը։

Մաշ էտա համա էլ, ամութ ջեր գլխի հայերին, վուր ամեն մէ չալխանին փուղ ին տալի ու թրիստրի համա կի մէ գրուշ էլ չին տալի։

Ամութ մեր Բաքուի հարուստներուն, վուր իրենց դվարեցներումին ապրում, Պետրգորսկ, Կիսլավոդսկ, գաղրանիցա հարիր հազարնիր ին ծախսում ու թրիստրի համա կի՝ էլի չին փիքր անում։

Իժում ամութ մեր քաղկի՝ Թիֆլիզի ասպաէրնիրուն, վուր մուշտրիք ջրեմէն ին շանց տալի ու մինձ մինձ խոսելուց սատայի, էլ չուրք չունին։

Ու չունքի բանը էս հանգի է, վուր ջեր էսօր էլ իփ վուր ամենամինձ, ամենապատուական, ամենատաղանդաւոր, ամենաշնորքով, ամենասիրուն, ամենագովալած հայ կնիկը ջեր էս օր էլ անտիզ է, անթիֆաս, էն ժուզը՝ իփ վուր մեր հարուստնիրը իրենց սրտի սիրեկնիրու համա դվարեցնիր էին շինում ու սիրեկնիրն էլ նրանց աչքը հանում՝ ուրիշ սիրեկնիրի հիդ քէփ ին անում, դոխտուրնիրն էլ համ հարուստի, համ սիրեկնի գլուխը թաղում, սիրուն սիրեկնիրին հիւանդացնում. իժում սպանում, իրենց անումով «դաւեչանեաս»(կատակ) գրիլ տալի։

Բաս ին, ին իրաւունք չունիմ ասելու թէ՝ «Հայ հարուստ, թիփէլ իմ բա- մեան էլ, բու հաշտուտունենի վաէն է» իփ վուր ասկը, Սիրանուշի թուռուր զարթ ունի ու նրա համար կի սակութար թրիստր չունի։

Դ. [illegible]

---

## ՄԱՐԴՆ ՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԻՆԸ

—

— Էլի ծուր։

— Ռատիկանատուն, նունուշիկս։

— Ինչու համար։

— Հին գրուած գիրքը տանում եմ կնքել տալու։

— Տես, երկու շարաթ չտանցնեն։

Մի*ւս* օրը.

— Դու նորից գնում ես։

— Ի՞նչ արած, նունուշիկս, հարկաւոր է։

— Ո՞ւր։

— Դարձեալ ռատիկանատուն։

— Ինչու համար։

— Գահ տալու եմ տանում, հին գրուած գիրքը։

— Ինչու երեկ երկուսը միասին չտարար։

— Երկուսը միասին. գժուել ես, ինչ է. որ կարծեն թէ այս գրքերի ամբողջ պահեստն ինձ մօտ է։

## ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ ՄԻՇՏ ՆՈՐ ՉԷ

—

Պրոֆէսոր Ա.—Կատարեալ խայտառակութիւն է, կոլլէգ. երէկ չեմ կարող յիշել, թէ դասակներիս ամեն մէկը քանի տարեկան է։

Պրոֆէսոր Բ.—Էհ, ինձ հետ այդ տեսակ բան երբէք չի կարող պատահել, որովհետև մէկ անգամ ընդմիշտ յիշում եմ հեռաւոր տարեթիւերը։ Ես ծնուել եմ Սոկրատեսի մահից 2300 տարի յետոյ, կինս Տիբերիոսի երկրորդ ամուսնութիւնից 1800 տարի յետոյ, մեր մեծ որդին Նիկոլայի ծնուել է, Տիտոս Սեմպրոնիոս Գրակխոսի Jeges Liciniae-ի փոփոխութիւնները վերահաստատելու համար ստացած իշխելուց 2800 տարի յետոյ, իսկ փոքր Վասիլի որդիս, 1500 տարի յետոյ, ազգերի մեծ գաղթականութեան սկզբից։

Է՞հ, ուղիղ չէ՞, որքան հասարակ միջոց է։

---

## ՆՇՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ

—

Մինչև օրս չգիտեմ պատճառը իմ բանտարկութեան էր։

Ես բանտարկեցի... իմ սեփական կամքով, իմ ցանկութեամբ։

Եւ այդ եղաւ այսպէս։

Գնացի ոստիկանատուն և յայտնեցի՝ որ ես մեծ յանցագործ եմ։

Որ խիղճս ինձ տանջում է։

Որ յանցանքիս մասին մանրամասնութիւնները կը պատմեմ միմիայն գլխաւոր դատախազին և... ինձ բանտարկեցին։

Տասնեւթ օր մնացի օսմանեան բանտում։

Բանտն ու բանտարկեալները ուսումնասիրելու։

Սահմանադրական բանտը։

«Միութեան և յառաջադիմութեան» բանտ, հաւասարութեան, եղբայրութեան և ազատութեան բանտ։

Որը գտայ ամեն կողմից։

Գարշելի, զզուելի և համոզուեցի, որ մի սահմանադրութիւն բանտը չէ քաղցրացնում։

Նոյն իսկ Աքմեդ Րիզայի սահմանադրութիւնը։

Որ միջնաները են միմիայն այստեղ կատարելապէս ազատ զգում իրենց և անարխիստական հակումներով այրում, ծրծում են սահմանադրական բոլոր ստամոքսի քաղաքացիներիս արիւնը...

Որքան հեշտ եղաւ բանտ մտնելս, այնքան նոյնքան դժուար էր այնտեղ ազատելը։

Մանաւանդ, այնտեղից դուրս գալը, որ նստեց ինձ վրայ 18 օսմանեան ոսկի որը ինդրեմ փոխադրէք սաստիկայ փաստով...

Դա մի ողբերգական էր, որ տասնեղն գրքով կը հրատարակեմ և կը ներկայացնեմ Օսմանեան խորհրդարանին, երբ նա... դադարի գոյութիւն ունենալուց...

Բանտէն դուրս գալով առաջին պարտքս էր այցելել Երեսփոխանական ժողով—Օսմանեան երեսփոխանական, որովհետև մեր ազգայինէն, ոչ մի սպասելիք չունէի, նոյն իսկ ոչ մի հետաքրքրութիւն...

—

Մայս Խորհրդարան-զեկանմբեր 15-ին Եօթներորդ նիստն էր,

Առեւտրական էր Աքմեդ Րիզան, այդ յեղափոխական գիտնականը, որ յաջողեցաւ ինչպէս գուք այդտեղ կասէք՝

Եւ կոյս ծնալ և սառը վատասկել...

Ներս մտայ ուղիղ այն ժամուն, երբ Աքմեդ Րիզայի զանգակը ալուեց։

Ելեկտրական զանգակը, սահմանադրական զանգակը և... հրամայեց խիստ լռութիւն կատարել՝

—Արդեօք Սալալէդդին Էֆենդու ինթերպելացին չէր այս...

Լռութիւնը կը կատարուի, իսկ մինչ այդ սկսեցին ճառերի տարափը. խառնկցութեան և մտքեր յայտնելու այդ ամենաձանձրալի տեսակը, երբ ամեն ոք կուզէ յաջորդ օրը իր անունը տեսնել լրագրաց մէջ, բայց երբեմն կը հրատարակէ իր ակնակալութեանց մէջ, որովհետև տեղական թերթերը իրենց արձանագրութեանց մէջ, կը բարեհաճին գրել

—Երեսփոխան մը. կամ՝

—Առեւտրական մը...

Ուզզակի կատաղեցնող կրճատում մի երեսփոխանի համար, որը իր գործունէութեան էութիւնը իր անուան տպելու մէջ դրած է։

—

Երբ մանրամասն կը գիտէի բոլոր այս նե, շէկ, ալեզարդ, դեր, ինքնաբաւական

գամն ծակից գիտում էր, մի տարօրինակ փոփոխութեան ենթարկուեց. Նրա քիթը (որ բաւական մեծ էր) նախ ներս ընկաւ գամն ծակից, յետոյ ինքը սկսեց երկարել, մինչև որ այնքան բարակեց, որ օձի նման ամբողջովին անցաւ գամն անցքից և ընկաւ միւս կողմը…

Այս ուսուցիչները, ասաց Թօրէնացին, լրտեսում էին իրենց ընկերների դասերը, նրանց դէմ որոգայթներ լարելու համար և նրանց պատիժը նոյնն է, ինչ որ իրենց սիրելի արհեստը…

Մենք վերջացրինք մեր երկրորդ պտոյտը և գնացինք հանգստանալու։

—Միթէ, հարցրի ես, հոգաբարձուները և ուսուցիչները այդքան վատ են.

Թօրէնացին պատասխանեց իր սովորական ձևով։

—Մեր հոգաբարձուների համար կը հիմնենք մի նոր հոգաբարձութիւն, այնպիսի հաշւով, որ ամեն մի հոգաբարձուի վրայ մի հոգաբարձութիւն լինի։ Այդ դէպքում գուցէ գործերը լաւ ընթանան։

Իսկ մեր ուսուցիչների համար, հիմնեցէք մի ընկերութիւն, որի նպատակը լինի, ամեն կերպ աշխատել ուսուցիչներին անգրագիտութիւնից ազատել

Առաջին անգամը չէր, որ Թօրէնացուց լսում էի այսպիսի թարս բաներ. ես հանեցի ծոցատետրս և գրեցի. հիմնել՝

1) Մի ընկերութիւն քահանաների մէջ քրիստոնէութիւն տարածելու համար։

2) Հոգաբարձութիւններ հոգաբարձուների համար։

3) Մի ընկերութիւն՝ ուսուցիչների մէջ գրագիտութիւն տարածելու համար։

Այս հարցերը ես առաջարկելու եմ խաթաբալխաների երկրորդ կոնգրեսին։

Զէնով Օհան

## ԱՌԱԿՆԵՐԻ ԳՐՔԻՑ

Ճապոնական վերջին պատերազմի ժամանակ, մի գիւղ մասնակցած չէ եղել վիրաւորների համար հանգանակւող նւիրաբերութեան։ Իշխանութիւնը գիւղացիների երեսին է տալիս իրենց անպարտաճանաչութիւնը։ Նրանք նեղացած՝ իսկոյն ժողովւում են ու վճիռ կայացնում, որ ամեն մէկը իրանցից 3 ական իէն նւիրէ, այդպէսով իրենց ամենահաւատարիմ հպատակութիւնը կայսեր և անձնւէր պարտականութիւնը հայրենիքին ցոյց տալու համար. բայց որովհետև, ասում են, մենք դրամ չունինք, ահա բոլորս էլ պատրաստ ենք, ըստ սովորութեան երկու օր բանդ նստել երեքական իէնի փոխարէն։

Մի հրէայի, որ իրաւունք չունէր Մոսկվայում բնակւելու, նահանգապետը կանչում է և ասում.—Դու այսօր պէտք է հեռանաս քաղաքից։ Իսրայէլի որդին պատասխանում է, ես արհեստաւոր մարդ եմ, իրաւունք ունիմ այստեղ բնակւելու։

—Արհեստդ ինչ է, հարցնում է նահանգապետը։—Ես, ձերդ գերազանցութիւն, թանաք եմ շինում։

—Դա ինչ արհեստ է. թանաք ես էլ եմ կարող շինել։

—Ուրեմն դուք էլ, Ձերդ գերազանցութիւն, իրաւունք ունիք Մոսկվայում բնակւելու,—խորը համոզւած պատասխանում է հրէան։

Մ. Ա.

## ԷՐԻՒԱՆԻ ԳՈՐԾԵՐԻՑ

—

15-յուն.

Թօմմա խաթարալխաներից այան էր, որ մեր թեմական շկօլի աշակերտները զաբաստովկայ արեցին տեսուչ Աղամալովի խաթրու համար, չունքի սրա վարժապետութեան ու տեսչութեան բիլէթի ճարին ոչ մի խաբար չկար։ Մինն ասում էր, թէ պաժարումը էրել ա, մինն ասում էր, թէ խակի չի ունեցել, մինն էլ ասում էր, թէ մկները կերել են և այլն։ Իսկ պարոն հոգաբարձուներն էլ «խաթրիչուն» ամեն բան մինդարալթի էին արել ու տաղ արել։ Այ, էս բաների համար խիստ դալմաղալ բանցրացաւ ու բանը հիմի էնդեղա վերջացել, որ պարոն տեսուչ Աղամալովին, թազադան էկզամին են անում մեր շկօլումը։

Պարոն Արղութովը քննում ա տեսչին վարչական ու դաստիարակական դասերից։

Պարոն Գէղէօն Ահարօնովը տիեզերքի վեր ու գիրը քննելու հաշիւներից։

Պարոն Նազարեթովը փանդաբըզկըէնից ու գերմաներէնից։

Պարոն փայտավաճառ Օհանովը բնագիտութիւնից ու փայտակազմութիւնից։

Պարոն Կամսարականովը ղըրթա, հայերէն չի գիտում, բայց քննութիւնը վեր ա կալել հայկաբանութիւն, հայոց պատմութիւն և մէկ էլ ասում են հայոց Եփրիմերգու, Ներսեսցու, Կիւրիլլոսի թարգմանութիւնից։

Պարոն Գրիգոր Սիմոնովը, էդ քննութիւնների նախագահն ա. մի շուշա նաշագիրինի ալիտա են պահելու էնտեղ, որ սա շուտ չքնի և չհօրանջի։

Մալադեց ես իմ Աստօծը մեր պարոն հոգաբարձուները։

Բամա։

Անենք կարելի ա, որ էս քննութիւնները չկատարւէր, եթէ տեսչի առեստատ չունենալու օրինակը ազդեցութիւն չանէր բաղաքի վաճառականութեան և արհեստաւո-

# ՇԱԲԹԻ-ՇԱԲԱԹ

IV

Ախալցխա…

Սա մեր բոլոր գաւառական քաղաքների enfant terribl-ն է…

Բաւական է մի օրեկւ ուսուցչի առաջարկեն Ախալցխա գնալ և… նրա երեսից կանցնի նեարդային մի դող…

Իսկ տեսուչ դառնալ Ախալցխայում—դա միևնոյն է, թէ ծեծւելու կամ խայտառակւելու открытый листъ վերցնել։

Այդպէս է Ախալցխան և այդպէս է շատ վաղուց, գուցէ հէնց հիմնադրութեան օրից։

Մարդիկ ունեն տաք արիւն, բարձր ձայն, գրգռւող նեարդեր և զարմանալի մեծ տրամադրութիւն. գաւառական կեանքի միակերպութիւնը ախալցխացիք համեմատում են մեծ և փոքր սկանդալների հետ, այդ սկանդալները խօսակցութեան նիւթ են դառնում, շարժում, կենդանութիւն են մտցնում մթնոլորտում և ախալցխացիք շնորհիւ այդ սկանդալների, չեն էլ նկատում թէ ինչպէս է նրանց օրը, շաբաթը, տարին անցնում։

Եւ ահա դրա համար էլ՝ Ախալցխան մեր գաւառական բոլոր քաղաքներից ամենից կենդանի քաղաքն է…

Թողնենք անցեալը, գանք հէնց վերջին օրերին։

Ախալցխան սրանից դեռ ևս մի երեք տարի առաջ, մեր քաղաքներից ամենից դեմոկրատիկն էր. ժողովներ, միտինգներ, հասարակական դատախօսութիւններ, ընթերցանութիւն, էմանսիպացիա, սոցիալիզացիա, կօօպերացիա, կանալիզացիա, ինչ ասէք կար այդտեղ. այն է մտածում էիր. այսօր չէ վաղը, այս քաղաքն առաջինը կիրագործի բոլոր սոցիալական հարցերը…

Բայց անցաւ մի քանի ամիս, մի տարի և այդ բոլորը ձանձրացրին ախալցխացուն. Նրա նեարդերը բթացան այդ բոլոր «իզացիա»-ներից և նա մի տարի յետոյ ընկաւ մի այլ ծայրահեղութեան մէջ—բոյկոտ հրատարակեց «իզացիա»-ին և այդ հողի վրայ սկսեց կռիւ—ինքը իր դէմ՝ մինչև բանը այնտեղ հասաւ, որ այսօր լրագրի («Գործի») մէջ կարդում ենք թէ.

> «Մի շարք արհեստաւորներ ու միկիտանչիներ բողոքել են կառավարութեան կողմից յայտարարած աշխատանքի ժամերի կրճատումի դէմ ու հարկն է և այլն»։

Կարծեմ բերածս կտորը բաւականին բնորոշ է։ Ախալցխայի աշխատաւորութիւնը բողոքում է աշխատանքի ժամերի կրճատման դէմ և… կառավարութիւնը ինքն է գալիս ու ասում՝ ոչ պ. պ. դեմոկրատներ, սպասեցէք, ես ձեզ իրաւունք չեմ տալիս այդ աստիճան մոռանալ ձեր գլուխը, երբ դուք և այլն։

րութեան վրայ: Տեղից վեր կենող անբիլէթ հաշւապահը, վարժապետը, տիրացուն, խմբագիրը, այգեպանը, գիփ սա էին փիկալել, թէ առանց ատեստատութեան մեզ էլ գործ տւէք:

Ասում են տէրը ճոց կլի:

—Բաս Թեմականի տեսուչը խի՞ ա անբիլէթ:

—Ջանմ, էս էլ հօ տեսչութիւն չի, ըստեղ ատեստատ ա, վաճառականութիւն ա, ամ՞հօ հայոց չկօլ չի. թէ չէ պարոն Նազարէթովի, Սիմոնովի, Օհանովի եւ մէկէլների ինչ էհտաճն էր, թէ Թեմական չկօլի տեսուչը ատեստատ՞չունի, եւ անպետք ա. իրանց ատեստատը հօ չէր փտտում:

**Փալանգաւզ Միօ**

---

## ԱՖՈՐԻԶՄՆԵՐ
### ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

Կանայք աւելի տղամարդիկ գայթակղեցրին. քան թէ տղամարդիկ կանայք:

—

Կինը չէր ուզենայ երբէք լինել առամբի, եթէ մարդիկ չ'լինէին կանամբի:

—

Կինը շղթայի մէջ էլ երջանիկ է, եթէ միայն սիրող ունի:

—

Ոչ մի շնեղ ծաղկափունջ, սիրող կնոջ զգացմանց բուրմունքը չունի:

—

Կինը աւելի շուտ սիրով քաղուել կըցանկանար, քան թէ առանց սէր ամուսնանայ:

## ԽԻՍՏ ԿԱՐԵՒՈՐ ԵՒ ՕԳՏԱԿԱՐ
### ՄԻ ՈՐՈՇՈՒՄՆ

Առ զգանն մերոյ «Խաթաբալայի» պատուէն և անձամբ, հասանին պէս-պէս բողոք և տեղեկութիւնք վասն ազգի-ազգի և զարշելի գործոց մերոց ազգայնոց յատուկ և այլոց և քանզի, ցարդ տեղեկութիւնք մենք ոչ կարեմք տալ լիովին, ի պատճառս պէս-պէս Ոււսոց, այլև ի նկատի առեալ՝ որ զբժիլոն «Խաթաբալայական» մեր կուսակցութեան բացեալ է զԴահլիճ Դատաստանական, որ տայ դիտել զայդ ամենայն չարիքն վասն արդարադատ վճռոյն. և քանզի զայդ գործք յոյժ կարեւոր և առհասարակ օգտակարք եղիցին, քանզի ի զատաստանատանն մեր չեմք ընդունելոյ զնրբացուցիչ և զմեղմացուցիչ դէպք յանցանաց, հրաժարելով կը հրաժարիմք ի փաստաբանաց, ոչ ընդունիմք զկաշառս, զպօչլինս, զմորկայս և զգբօրս և զայլ շորաֆան զատաւորաց, և.., և... և այնմանէ, զի զդատաստանատունն մեր նմանելոց չէ զդատավարութեանց միւյեզամփոխական կուսակցութեանց, որք միմիայն չան յանդամոց իւրեանց ուխին ինկատի կուրօրէն և ոչ արդարութիւնն. ուստի, պատուիրեաց եւ որոշեաց՝ նախագահութեամբ Գասպար աղայի Կալանդառեանց և անդամութեամբ անդամոց խմբագրութեան՝ Իւմորի և այլոց, այլև զգաստութեամբ զօէր զատախազ օր. Սատիրայի, կազմել ատեանն զատաստանական և զամենայն գործ՛տալ, ի վարել նոցա ըստ կանոնաց մերջև օտար կանոնագրաց և սեփական զատողութեանց:

### ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ

«Խաթաբալիստական» ատեանս լսեց. մեր զատախազ օր. Սատիրայի բողոքը հասարակութեան անտարբերութեան մասին դէպի այրի տիկ. Սօֆիա Տէր-Գրիգորեանցը, որ ամուսնու մահից յետոյ, ծանրաբեռնուած փոքրահասակ մանուկներով, (չորս հոգի, որոնցից մեծը՝ տղան 12 տարեկան, իսկ միւսները աղջիկներ՝ 10, 7, և 5 տարեկաններ) որոնք զուրկ են ապրուստի ամենահասարակ միջոցներից և որք բաղխելով հասարակութեան անդամների, խմբագրների դռները աղերսում է չնչին փոյթ օգնութիւն զաւակներին սովամահից ազատելու համար՝

### ՈՐՈՇԵՑ
#### ՏԵՂԵԿԱՆԱԼ

1) Ջանի՞ արդեօք այրի տիկ. Սօֆիա Տէր Գրիգորեանը փոքր ի շատէ ապահով ազգականներ կամ բարեկամներ:

2) Ո՞վքեր են նրանք:

3) Ի՞նչ միջոցների տէր:

4) Օգնում են արդեօք նրանք իրենց թշւառ և աղքատիկ բարեկամներին:

5) Եւ ինչ չափով:

6) Եւ եթէ չեն օգնում մանուկ սովեալներին, ինչ պատճառով:

Իսկ եթէ իմացւի որ իրօք կան այդպիսի բարեկամներ, որոնք անունով կան ամանունք չկան, այսինքն չեն օգնում թշւառ ու անանկներին՝

Այդ դէպքում՝ վարել այդպիսիների հետ, ըստ զօրութ. 6-րդ յօդւածի առանձին պարբերութեան, հայկական օրէնսագրքի Գօշ Մխիթարի. Ա պատւէրի ամենազօրեղ Արարչի և բոլոր բարեպաշտութիւնների հասարակական առաքինութիւնների՝ ենթարկելով այդպիսիներին անարգանաց սիւնին և այդ մասին յայտնել պ. Գասպար Կալանտարեանցին, դրանց նկարը գլխիվայր (գլուամայր) ապելու համար «Խաթաբալայի» ասոր էջերում, ի տեղեկութիւն հանուրց հայոց և մանաւանդ սիրելեաց այդպիսի ազնիւ և ապերախտ բարեկամ-ազգականաց.

---

Եւ... և հրամայում է՝ իրաւունք չունենալ 12 ժամից աւելի աշխատել և աշխատեցնել:

Թղթակիցը բերելով կառավարութեան այս կարգադրութիւնը. աւելացնում է իր կողմից՝

Փառք այս օրին...

Իմ կարծիքով այս տեսակէտից, ճիշդ որ Ախալցխան միակ քաղաքն է մեր գաւառական քաղաքներից և եթէ ես փողը լինեմ, որ նոյն միկիտանչիներն ու արհեստաւորները դառել են այժմ անարխիստ-կօմունիստներ, ես չեմ զարմանալ, որովհետև չեմ զարմանում այն բոլորից, որ կատարւել է և կատարւում է այդ հնաշխարհիկ քաղաքում:

Երկրորդ օրինակ, դարձեալ մեր օրերում, դարձեալ Ախալցխայում:

Նոյն թերթի մէջ նոյն թղթակիցը գրում է, որ այնտեղի «դրամատիկ սիրողների ընկերութիւնը» ասել է, ինչ էք կարծում, ինչ պիէս: Ոչ աւել և, ոչ պակաս՝ քան Իբսէնի «Նորա», այսինքն այն պիէսը, որին ներկայացնել ահա չորս տարի է, չեն համարձակել Թիֆլիզում, ոչ ռուսական, ոչ հայկական և ոչ էլ վրացական առաջնակարգ խմբերը:

Իսկ Ախալցխայում наплевать... ինչու չխաղալ հէնց «Նորա» ասել են այնտեղի հայուհիները և խաղացել են:

Բայց այդ էլ բաւական չէ:

Թղթակիցը իր ռեցենզիայում գրում է, որ տիկ. Մամիկոնեանը, այսինքն նա, որ դեռ ախալցխայական համարձակութեամբ խաղացել է «Նորայի» դերը, այդ նոյն տիկինը ճիշտ է, սկզբում փոքր ինչ թոյլ է խաղացել, բայց... բայց վերջացրել է շատ «յաջող»:

Եւ թղթակիցը աւարտում է իր ռեցենզիան ասելով՝ «հանդիսականները գոհ սըրտով հեռացան»...

Ասացէք խնդրեմ և ինչու գոհ չլինային Ախալցխայի հանդիսականները, երբ Ախալցխայի բեմից տեսել են «շատ յաջող «Նորա», մի բան որ Ռուսաստանը տաս տարւայ մէջ տեսաւ միայն անցեալ տարի, երբ Պետերբուրգում և Մոսկւայում խաղում էր աշխարհահռչակ էլէօնօրա Դուզէն...

Ինչ ուզում էք ասէք, բայց Ախալցխան հետաքրքիր քաղաք է, միայն թէ այնտեղ լինես ոչ տեսուչ, ոչ հոգաբարձու, ոչ ուսուցիչ, ոչ արհեստաւոր, ոչ ձայնաւոր և ոչ էլ մանաւանդ յաջորդ, այլ մանես քաղաք և այցելես ակումբի դահլիճը, երբ բեմի վրայ տիկին Մամիկոնեանը ռուսական ակցենտով խաղում է Իբսէնի «Նորա»...

Սրան են ռուսերէն ասում:

И дешево и не сердито, не много скандально, но зато пріятно.

Ընդհանրապէս հետաքրքիր քաղաք է Ախալցխան:

**Սօսանէ»**

—

Կարսից ստացուած մի թղթակցութեան մէջ, մեղադրւում են «Արաքած» ընկերութեան վարչութեանը, հետևեալ կէտերով.

1) Վարչութիւնը մինչև օրս կանոնաւոր հաշիւ չէ տուել անդամներին։

2) Վարչութիւնը պարտաւորւած է եղել, ամեն երկու ամիսը մի անգամ տպագրւած հաշւեկշիռ ներկայացնել ընկերութեան անդամներին, մինչև օրս չէ կատարել։

3) Արաքածի մի յոյնի 12 փթանոց ամանների մէջ, միայն ութ փութ նաւթ է լցրել։

4) Ընկերութեան ամբողջ արդիւնքը ծախսել է կառավարչի անձնական համար և 126 րուբլի էլ դրամարկղից է պակսել։

5) Քննիչ մասնաժողովի անդամները—

Մ՚նանայ հաշիւ տեսնելու կերթան կը.
Սկլայի փարով յառաջ գալով կառնին կը.
Փայթօնլամիշ կեղնին կը, սոօլները շարին կը.
Նախագահն ընտրին կը, կենացները կօնծին կը՛

Ղարսայ պարը բռնին կը, թարս ու շիտակ թռնին կը
Հիսապ-քիթապ ծալին կը, բուխարկէքը շարին կը
Նաւթի հաշւով լաւ-լաւ քէֆեր կենին կը.
Աղբատ ընկերութեան ղէրը անիծին կը՛

ՈՐՈՇԵՑ

1) Վարչութիւնը կանոնաւոր հաշիւ տայ անդամներին։

2) Այս որոշումը հրատարակելու օրւանից, երկու ամիս չանցած, տպագրւած հաշւեկշիռ ցրւել բոլոր անդամներին, մի օրինակ էլ ուղարկել «Խաթաբալային»։

3) Արդիւնքի 20 տոկոսը միայն ծախսել կառավարչի անձնական համար, իսկ 126 րուբլի պակասորդը, յետ առնել կառավարչից յօգուտ ընկերութեան։

4) Ազատել յոյնից տեսնւած նաւթը լցնել բութիլների մէջ և քննիչ մասնաժողովի քէֆի սեղանին շարել գինու տեղ։

—

Ախալքալաքի Գ. գիւղի այրի քահանան փախցրել է նոյն գիւղացի մի այրի կնոջ։

Գիւղացիք, գլխաւորապէս փախցրած այրի կնոջ ազգականները, «շատ մը արգոներ են տէրտէրին վրայ», որ ոչ միայն ջահէլ հարս է փախցրել, այլև հարսի հետ տարել է սեպհական մուրհակները, որոնք վերջին օրերս գեղեցիկ այրին անուան էին փոխադրել։

ՈՐՈՇԵՑ

Գ. գիւղի քահանային յանցիմանել այրի տիկնոջ առևանգման համար. իսկ եթէ այրի տիկինն էլ ուզեցել է տէրտէրակին դառնալ, այդ դէպքում պատիժը մեղմել, միմիայն պատւիրել տէր հօրը, մի եօթնեակի ընթացքում ապօրինաբար գրաւած բոլոր պարտամուրհակները դարձնել օրինաւոր տէրերին, նոր տիրուհու հետ վարել բաւ ամենայնի քաղաքավարի, որպէսզի գեղեցիկ նորահարսը նորից չփախչի։

Իսկ այս պատկի համար աջահամբոյրը թողնել նրանց փէշքէշ։

Նախագահ՝ զարուլ խմ
Դաս. Կալատուզեանց

Անդամներ՝ } Ստորսվէտ, Մ՚իջակէտ, Իսօր, Կէտ-կէտ

Քարտուղար՝ Զիք
Դատախազ՝ օր. Սատիր

---

# ԴԻՒԱՆԱԳԷՏՆԵՐ

—

Կարապետ Սիմոնիչը կնճռած ճակատով, ձեռքները յետև դրած՝ քայլում էր սենեակում. իսկ գրասեղանի կողքին Նիկոլայ Մարտինիչն էր նստած, աչքերը մտախոհ յառած մի կէտի. երկուսն էլ ծանր խորհրդածութիւնների մէջ էին և ելեքտրական լոյսը երկուսի էլ փիլիսոփայօրէն ճաղատ գլխներին քնքնելով արտացոլւում էր, դրութեանն աւելի խորհրդաւորութիւն տալով։ Պատկերը լրանում էր մանաւանդ նրանով, որ Վալենտինա Արսամոնովան էլ՝ բազկաթոռին թեկնած՝ աչքերը յառել էր պատից կախած պարսկաստանցու մի պատկերի ու նոյնպէս մտածում էր, իսկ քիչ հեռու կանգնած, գիմնազիստ Կօլեան նոյնպէս անհամբեր շարժումով իր հօր, Կարապետ Սիմոնիչի քայլւածքի հետ, աչքերը տանում էր ու բերում։

Բաւական տևեց այդ դրութիւնը, երբ Կարապետ Սիմոնիչը մօտեցաւ Նիկոլայ Մարտինիչին, կանգնեց նրա դէմուդէմ, և ուսերը վեր քաշելով խօսել սկսեց.

—Չեմ հասկանում, ոչինչ չեմ հասկանում, աշխարհս իրար է խառնել… Տաճկաստանում յեղաշրջում և սահմանադրութիւն. Պարսկաստանում սահմանադրութիւն և յեղափոխութիւն. Չինաստանում՝ թոյն և գրեթէ սահմանադրութիւն. Վիէնայում՝ ամեն ինչ գլխիվայր դուռ խառնակութիւններ է անում, Աւստրիան սեպհականում է Բոսնիա Հերցեգովինան, Բուլղարիայի իշխանն իրեն թագաւոր և Բուլղարիան անկախ է յայտարարում և այլն, և այլն. մի կատարեալ քաղաքական աշտարակաշինութիւն… ինչով կը վերջանայ այս բոլորը՝ յայտնի չէ, միայն պարզ կարելի է ասել, որ այս անյայտութիւնը պայթուցիկ նիւթեր շատ է պարունակում իր մէջ։

—Բոլորովին էլ անյայտ չէ.—տեղից քիչ ուղղւելով՝ հառաչեց Վալենտինա Արսամովնան—Սուլթան խանը կը յաղթէ,, անպատճառ կը յաղթէ, և մթնոլորտը կը պարզւի։

—Մենք համարեա թէ այդ մասին չենք խօսում, տիկին,-կիսահեգնօրէն դարձաւ իր կնոջը, Կարապետ Սիմոնիչն ու նորից դիմեց Նիկոլայ Մարտինիչին։

—Ես պնդում եմ սակայն, և այս իմ տեսնախօսին համոզմունքս է, որին դու էլ անպայման պէտք է համաձայնես, որ Աւստրիան ամենավտանգաւոր խաղն է խաղացել, Բոսնիա-Հերցեգովինան սեփականացնելով։ Էրէնտալը իր դիպլոմատիական տհասութիւնը ցոյց տուեց այդ խնդրում, և ես սպասում եմ, որ նա խասիւ կը տուժէ իր կատարած քայլերի համար։ Հեշտ չէ իր պատիւն խնայող ազգերին, Աւստրիական սահմանագծով փակել։

—Հա՛, ի հարկէ,—ծանրօրէն պատասխանեց Նիկոլայ Մարտինիչը,—այդ տեսակ օրը-ցերեկով թալան, թէկուզ Եւրոպայում՝ անպատիժ չի մնայ։ Բազմացեղ, բազմալեզու Աւստրիան, երբէք չի կարող հանգցնել այն կրակը, որ անշուշտ կառաջի կերպով պիտի բորբոքեն նոր հպատակները, և հարեան շահագրգռւած փոքրիկ տէրութիւնների մէջ, և ձեզ հետ միանգամայն համաձայն եմ, որ Աւստրիական Բիսմարկը, ինչպէս Էրէնտալին են յորջորջում, կամ աւելի ճիշտը, Բիսմարկի մինիստերիան շուտով կը զրկւի իր գահոյքներից։ Հարցը կնճռոտ է, և ոչ ոք չի կարող պատասխանատւութիւն վերցնել իր վրայ յայտնելու, թէ երբ մարդիկը կը հանդարտեն, և աշխարհը կը խաղաղւի։

Ոչ ոք չի կարող, իսկ ես կարող եմ այդ պատասխանատւութիւնն ինձ վրայ վերցնել ու ամեն տեղ կանչել, որ խաղաղութիւն կը սահմանւի այն ժամանակ, երբ սոցիալիզմը ուժեղ գրոհով կը ջնջէ բոլոր անարդարութիւնները, երբ հաւասարութեան դրօշակը կը ծածանւի երկրագնդի բոլոր անկիւններում, երբ գոյութեան կռւի խնդիրն, իր յաջող լուծումը կը ստանայ, երբ կապիտալը կը զրկւի իր տիրական նշանակութիւնից, երբ ամեն ինչ կը դառնայ հասարակութեան սեփականութիւն… և կը գայ, կը գայ այդ ժամանակը.—յուզւած մի քայլ առաջ գնելով իրար յետևից, կարմրած, վրայ տուաւ Կօլեան, և, երևի բարկանալու սրտչ հիմք ունենալով, բարկացած, տեթոր շատացնելով քաշեց պատի տակ ու թափով նստեց վրան։

—Ըհ՞ը… խնդիրը լուծւած է.—հեգնեց Կարապետ Սիմոնիչը և որդու առածներին ուշադրութիւն չդարձնելով խօսքն ուղղեց Կարապետ Մարտինիչին—Դուցէ կատարւող փաստերի վրայ յենւելով կարողանայի որոշ ենթադրութիւններ անել, բայց զգուշանում եմ. Եւրոպան այժմ, ակամայից, կապւած է Հեռու-Արևելքի կապանքներով. մինչդեռ, ոչ մի խորաթափանց դիպլոմատ չի կարող գլուխ թափել այն քողարկւած, խորամանկ քաղաքականութիւնից, որ Եապոնիան ունի. գոնէ իմ խելքս բան չի կտրում. մի կողմից այն որ Եւրոպայի այս կամ այն ազգութեամբ բռնէլիք դիրքի խոշոր նշանակութիւն ունի Եւրոպայի ներքին կեանքի նկատմամբ, միւս կողմից

Տաճկաստանը, որ անկերպարան զրուցեան մէջ լինելով հանդերձ՝ յանկարծակի սիւրպրիզներ է խոստանում, իսկ միւս կողմից էլ Պարսկաստանը սա...

—Սաաթչար խանը իր հերոսութիւններն է անում...—ընդմիջեց Վալենտինա Արամովնան, զմայլմամբ արտասանելով «Սաաթչար խանն» անունը։

—Մի ընդհատիր, խնդրում եմ,—ունքերը կնճռելով՝ նկատեց Կարապետ Սիմոնիչն ու շարունակեց.—և այդպէս՝ մի կողմից նորութիւններ խոստացող Տաճկաստանն, իսկ միւս կողմից՝ Պարսկաստանը...

—Մանաւանդ որ, դեռ երիտասարդ է—հիացաւ տիկինը։

—Ո՞վ, Պարսկաստանը...

—Ի՞նչ Պարսկաստան... Սաաթչար-խանը, Սաաթչար-խանը...

—Ի սէր Աստծոյ, մի կտրէք մտքերիս թելը,—զայրացած ձայնով կանչեց ամուսինն, շարունակելով,—իսկ միւս կողմից Պարսկաստանը, ուր անարխիան խոշոր ծաւալ է ստացել և մի քանի խոշոր պետութեանց շահեր ճակատ-ճակատի են կանգնել, այդ բոլորն ինձ ստիպում են առայժմ ձեռնպահ մնալ ու կարծիքս չյայտնել մօտիկ ապագայում լինելիքների մասին։

—Միայն փախկոտ ու անհամարձակ մարդիկն են, որ խուսափում են բարձրաձայն խոստովանելու այն, ինչ որ արևի պէս պարզ ու ճշմարիտ է. նորից բորբոքուեց զինուորական ու երկու ձեռներով օդը ապտակելով կանչեց,—բուրժուական մտածողութիւններով տարուած՝ աշխատում էք չըտեսնելու ձևացնել այն, որ ձեր հոգու խորքերում ընդունում էք. մի՞թէ չէք տեսնում, որ կարմիր դրօշակն արդէն փողփողում է հորիզոնում. այդ դրօշակը շուտով կը տընկուի հին կարգերի մնացորդների վրայ և պրօլետարական զինուորութեան...

—Կօլեա, մի խանգարիր ու գնա դասերդ սովորիր,—չըշտեց Կարապետ Սիմոնիչն ու դարձաւ Նիկոլայ Մարտինիչին,—գոնէ եթէ Պարսկաստանում խաղաղութիւն լինէր... Շահի փախուստը մանաւանդ...

—Օ՜, «նա» չի թողնի, որ շահը իր նըպատակին հասնի.—բացականչեց տիկինն, աւելացնելով.—ես յոյս ունեմ, որ Սաաթչար խանը շուտով Թէհրան կը հասնի։

Ամուսինն ուշադրութիւն չդարձրեց ու շարունակեց թթուած դէմքով.

—Մանաւանդ շահի փախուստը տարօրինակ է. նա...

—Ի՞նչ պէտք է անի Սաաթչար խանի վրէժից.—նորից ընդհատեց տիկինը։

—Ի՞նչ է, անպատճառ ուզում ես, որ գոռամ,—այս անգամ բարկացած, թունաւոր հայեացքով՝ գոչեց Կարապետ Սիմոնիչը.—Սաաթչար-խան, Սաաթչար-խան... մեզ համար խո Աստուած չդառաւ։

—Ինչպէս.—ցնցուելով վեր թռաւ տիկինը.—Սաաթչար-խանին չես հաւանում... այ քէ ինչ... դէ ի հարկէ, դու Կարապետ Սիմոնիչ, նա՝ Սաաթչար-խան.—քեզ արանգից հասնի... բայց գոնէ նրա պատկերին նայիր։

—Տիկին,—հանդիսաւոր ու պաշտօնական եղանակով խօսեց ամուսինը,—գիտեմ, որ ձեր աչքում ես շատ ու շատ չնչին եմ. բայց մի՞թէ այդ իրաւունք է տալիս ձեզ՝ մի բաղէյում տասն անգամ ինձ ընդհատել. եթէ խօսելու ցանկութիւն ունիք, համեցէք, խօսեցէք, ձեր հեղինակաւոր կարծիքը յայտնեցէք, իսկ ես՝ կը լսեմ.—Կարապետ Սիմոնիչը ծանր քայլերով մօտեցաւ զինանին, նստեց մի ծայրին, ու գլուխ տալով՝ աւաց.—համեցէք, տիկին, ես լսում եմ։

Տիկինը մի զայրացկոտ հայեացք նետեց ամուսնուն, և պատրաստւում էր շանթելու, բայց Նիկոլայ Մարտինիչը. մօտեցող արհաւիրքը նախատեսնելով՝ միջամտեց հաշտեցուցիչ եղանակով։

—Լսէ, Կարապետ Սիմոնիչ, ինչու էք նեղանում, Վալենտինա Արամովնան իր նըկատողութիւններն է անում. այդ տեսակ ընդհատումները նոյն իսկ պարլամենտական են. օրինակ՝ Պուրիշկևիչը... իսկ ես, եթէ ցանկանում էք, կ՚աշխատեմ լրացնել ձեր միտքը. երևի ուզում էիք ասել, թէ՝ Պարսկաստանը իր ներկայ դրութեամբ պարտական է Մահէզ-Ալի շահին, որ...

—Զմոռանաք Սաաթչար-խանին ևս յիշելու,—բացականչեց Վալենտինա Արամովնան։

—Մահէզ-Ալի շահին, որ սահմանադրութեան պահպանումը մի քանի անգամ Ղուրանի վրայ երդուելով հաստատելուց յետոյ, իր երդումը նոյնքան անգամ ուրացաւ. նրա այդ տարօրինակ վարմունքը...

—Իսկ Սաաթչար խանը,—անհամբերութեամբ գոչեց տիկինը, ձեռքն առաջ մէկնելով։

Կարապետ Սիմոնիչը պոկուեց տեղից, գլխարկը վերցրեց, վերարկուն հագաւ, և առանց արժանապատուութիւնը կորցնելու մի քայլ անելու՝ դուրս գնաց։ Նիկոլայ Մարտինիչն էլ նոյն եղանակով հետևեց նրան, սենեակում թողնելով միայն տիկնոջն ու Կօլեային, որոնք շարունակեցին ընդհատուած զինուորականական վէճը։

Մասագոր

Ն Ւ Ի Ր Ա Տ Ւ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Բագրատի Բուդաղեանը մի օրինակ «Խաթաբալա» նուիրել է Սաղեան գիւղի դպրոցին 1909 թ.

Նունեցի Դ. Աչմանեանցը մի օրինակ «Խաթաբալա» նուիրել է Դաշբուլախ գիւղի «Քնարծ» գրադարան-ընթերցարանին։

# ՓՈՍՏ-ԱՐԿՂ

Բաղուս Չրրաշխեանին.—Ձեր տուած հասցէներով երկու օրինակ «Խաթաբալա» ուղարկւում է Վան։ Ի հաշիւ բաժանորդագնի Ձեր ուղարկած վեց րուբլին ստացանք.


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ




Ո՞րտեղ տաքուկ ու մեղմ է.
—«Վերսալ» հիւրանոցում։
Ո՞րտեղ տաքացնելը ձրի է.
—«Վերսալ» հիւրանոցում։
Ո՞րտեղ անպարատ մաքրութիւն է.
—«Վերսալ» հիւրանոցում։
Ո՞րտեղ լիակատար հանգիստ կճարէք.
—«Վերսալ» հիւրանոցում։
Ո՞րտեղ համեմատաբար էժան է.
—«Վերսալ» հիւրանոցում։
Ո՞րտեղ կան ամեն յարմարութիւնները.
—«Վերսալ» հիւրանոցում։
Իսկ ո՞րտեղ է «Վերսալ» հիւրանոցը։
—Ամենն էլ գիտեն. Իշ. Վարանցովի արձանի մօտ. Հեռախօս № 418

ՑԱՔԱՐ ՄԿՐՏՈՒՄԵԱՆԻ
ՎԱՐՍԱՎՐԱՏՈՒՆԸ
(Парикмахерская)

Գտնւում է Գոլովինսկի պրօսպ. տուն Միրզոյեւի, Արդունի թատրոնի եւ կորպուսի դիմաց։

Երես ածիլելը, խուզելը և մազերը փարատելը կատարւում է խիստ արագ և մաքուր։

Գները խիստ չափաւոր

ԵՂԲ. ՆԻԿԻՏԻՆՆԵՐԻ ՑԻՐԿ




Ժամանեց աշխարհահռչակ և անյաղթելի

ՀԱՅ ԸՄԲԻՇ

ԳՐԻԳՈՐ ՄԿՐՏՉԵԱՆ
ԲԱՐԱԴԱՆԵԱՆՑԸ
(Բեսարաբցի)

Որը մասնակցել է համաշխարհային ըմբշամարտերում Բերլին, Պրագա, Լոնդոն, Պարիզ և այլ քաղաքներ։

ԳՕՏԵՄԱՐՏԻ ԵՒ ՈՅԺԻ համար ստացել է ոսկեայ մեդալներ և պատուոր մրցանակներ։



## ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

# „ՊՐՕՎՕԴՆԻԿ"

ԱՐՏՕՆԻԱԾ

Ամենալաւը աշխարհում



Ամենատաքին և ամենաթարմ ամրութեան, լաւ յարմարութեան, չքեղ ֆասօնների և ամենալաւ գործածութիւնից:

ԱՆՊԱՅՄԱՆ
ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ
ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆԹ-
ՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱՐ



## ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

# ՊՐՕՎՕԴՆԻԿ

ԱՐՏՕՆԻԱԾ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

# Մ Ի Ի Ն Ք Ե Ւ Վ Է Յ Ս

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱՔՈՒՄ

1888

---

## ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

### ՀԱՍԿԵՐ

Մանկական պատկերազարդ ամսագիր

ԹԻՖԼԻԶ

Բաժանորդագ. է ա. 3 ր. մանկ. բաժ. 4ր.

Тифлисъ, Бебутовская 25;

### ԱՐԱՐԱՏ

Ս. Էջմիածնի Հայրապետ. աթոռի պաշտօն. ամսագիր

Բաժանորդագինն է ՌՈՒՍ. 4 ր. ԱՐՏԱՍ. 5ր.

Эчміадзин. Типографическому Комитету.

### ՀՐԱԶԴԱՆ

Գրական հասարակական շաբաթաթերթ

ԵՐԵՒԱՆ

Эривань. Редакція „Раздан„

### Ն Ո Ր Դ Պ Ր Ո Ց

Ամսագիր

„ԹԻՖԼԻԶ"

Բաժանորդագինն է տարեկ. 5 ր. կէս տար. 3 ր

Тифлисъ, Редакція „Нор-Дпроц"

### Ժ Ա Յ Ռ

Գրական հասարակական և քաղաքական թերթ

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼ

Բաժանորդագինն է տարեկան 3 ռուբ.

Александрополь „Жайр"

### Զ Ա Ն Գ

Գրական, հասարակական և գեղարուեստական

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Բաժանորդագինն է

Բաքւում 4 ր. ուրիշ քաղաքներում 5 ր.

Баку, Редакція „Зангъ"

### ԳԵՂԱՐՈՒԵՍՏ

Գրական-գեղարուեստ. Լրաժ. պատ. հանդէս

ԹԻՖԼԻԶ

10 գիրքը 10 ր. 6 գիրքը 8 ր. 4 գիրքը 5ր. հատով 2 ռուբլի

Тифлисъ, Редакція „Гегарвест"

### ԽԱԹԱՐԱԼԱ-ի

կոմպլեկտներ փառաւոր կազմած

1906 թւի արժէ 5 ր.

1907 թւի 7 ր.

1908 թւի 7 ր.

Ցանկացողները պէտք է ուղարկեն կանխավճար 3 ր. որոնց կուղարկենք վերադիր վճ.

Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

Скоропечатная „Дзмоба" Московская ул. № 5.

## ՎԵՀԱՊԵՏԻ ՃԱՇԻՆ




—Խմենք, պարոններ, Հայաստանի սովեալների կենացը, թող ապրին նոքա, որ պատճառ դարձան Թուրքիոյ վերածնութեան։

—Կեց...ցէ՜ է...ն...ն.

## Բ Ա Գ Ւ Ո Ւ Մ



—Աղա ջան, գլխիդ մատաղ, թող տուր մի տեղ հաւաքւենք, էս շանտաժիստներից գլխներս ազատելու համար մի քանի մտածենք...

—Ս... ս... ս... չհամարձակւէք։

«ՀՈՎԻՒ ՔԱՋ ԶԱՆՁՆ ԻՒՐ ԴՆԷ Ի ՎԵՐԱՅ ՈՉԽԱՐԱՑ»



Хром.-Лит. С. Быкова, Тифлис.

Յունուարի 6-ին, ջրօրհնեաց օրը, մեր քահանաները տխրում էին կարօտալից իրենց հօտին, որ թողնելով Սաթունեան արքազանին մենակ պատարագն ու ջրօրհնեաց հանդէսը կատարելու․ իրենք փախել էին եկեղեցիներանց առօրինէքը.